Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 23.12.2022 թվականի «2023 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 298-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. Մասիս համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը

2023 թվականի համայնքի բյուջեի ծախսային մասի փոփոխությունը պայմանավորված է մի շարք ծրագրերի իրագործմամբ և համայնքում ծագած որոշակի խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Համայնքի խոշորացմամբ և խնդիրների մեծ ծավալով պայմանավորված բյուջեի որոշ ծախսերի մասով նախատեսված միջոցները չեն բավարարում մինչև տարեվերջ վճարելու առաջացած ծախսերը, ուստի անհրաժեշտություն է առաջացել բյուջեի վարչական մասի ծախսերն ավելացնել՝ կապի ծառայությունների մասով 1500,0 հազար դրամ, հատուկ նպատակային նյութերի մասով՝ 1000,0 հազար դրամ, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝ 5000,0 հազար դրամ:

Բյուջեի ֆոնդային մասի փոփոխությունը պայմանավորված է հետևյալ խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ: Համայնքապետարանի 5-րդ հարկի վերանորոգումը մոտենում է ավարտին, ուստի անհրաժեշտ է ձեռք բերել ցանցային համակարգ՝ 7414,8 հազար դրամ, օդորակիչներ՝ 4263,0 հազար դրամ, համակարգիչներ և տպիչներ՝ 3210,0 հազար դրամ:

Համայնքում ծագած խնդիրների արագ և օպերատիվ արձագանքման համար անհրաժեշտ է ձեռք բերել թվով 2 ծառայողական ավտոմեքենա, որոնց համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 10236,0 հազար դրամ:

Ռանչպար գյուղի թվով 12 արտեզյան հորերի վերանորոգման համար անհրաժեշտ է ձեռք բերել նախագծանախահաշվային աշխատանքներ: Նշված ծառայությունը ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է 4 գնման ընթացակարգ 600,0 հազար դրամ արժեքով, որոնցից 3-ը հայտարարվել է չկայացած, ոչ մի հայտ չներկայացնելու հիմքով: Հետագայում հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման զեկուցագիրը, գնման գին է սահմանվել 2000,0 հազար դրամ, որից հետո միայն ընթացակարգը կայացել է և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ կնքվել է պայմանագիր: Ելնելով վերոնշյալից անհրաժեշտ է բյուջեի համապատասխան տողի միջոցներն ավելացնել 1400,0 հազար դրամով:

Մի շարք ծրագրերի իրականացման համար 2022թ. ձեռք բերված նախագծանախահաշվային փաթեթներով կատարվել են գնման գործընթացներ, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել ընդհանուր 8504,19 հազար դրամ, որից՝

- Մասիս համայնքի Արբաթ բնակավայրի երաժշտական դպրոցի գազաֆիկացման աշխատանքների համար 2872,95 հազար դրամ
- Մասիս համայնքի Դաշտավան գյուղի մանկապարտեզի տարածքի բարեկարգման և ցանկապատման աշխատանքների համար՝ 5631,24 հազար դրամ:

Ստորև ներկայացվում է բյուջեի փոփոխության վերաբերյալ տեղեկանքը:

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերում եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների							
							Հազար դրամ
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	*Գործառական դասակարգում, նպատակ*	*հոդված*	*Վարչական մասի ծախսեր /հազար դրամներով/*	*Ֆոնդային մասի ծախսեր /հազար դրամներով/*
				Ծախսեր			
1	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Պարգևատրում	4112	-7500,0	
2				**Կապի ծառայություններ.**Փոստային ծառայություններ	4214	1500,0	
3				**Վարչական սարքավորումներ.** Օդորակիչներ	5122		4263,0
4				**Վարչական սարքավորումներ.** Համակարգիչներ և տպիչ սարքեր	5122		3210,0
5				**Տրանսպորտային սարքավորումներ.** Ծառայողական ավտոմեքենաների ձեռք բերում	5121		10236,0
6				**Այլ սարք, սարքավորումների ձեռք բերում.** Ցանցային համակարգի ձեռք բերում	5129		7414,8
7	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /ուղևորափոխադրման ծառայություն/	4239	5000,0	
8				**Հատուկ նպատակային նյութեր.** Ծաղկեպսակների ձեռք բերում	4269	1000,0	
9				**Վարչական սարքավորումներ**	5122		-35027,99
10	04	2	4	**Ոռոգում.**Ռանչպար գյուղի թվով 12 արտեզյան հորերի վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		1400,0
11	04	3	2	**Նավթամթերք և բնական գազ.**Արբաթ բնակավայրի երաժշտական դպրոցի գազաֆիկացման աշխատանքներ	5112		2872,95
12	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.** Շենք-շինությունների կապիտալ նորոգում	5113		5631,24
						0,0	***0,0***

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերի եկամուտների ու ծախսերի ավելացում կամ պակասեցում չի լինի:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Լ. ԱՍՏԱԲԱՑՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ